ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՄԲԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

acba

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ	**3**
01.	**ՆԱԽԱԲԱՆ**	**4**
	Խորհրդի նախագահի ուղերձը	**4**
	Գլխավոր գործադիր տնօրենի ուղերձը	**5**
02.	**ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԺԵՔՆԵՐԸ**	**6**
	Մեր առաքելությունը	**7**
	Մեր արժեքները	**7**
03.	**ՄԵՐ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**	**8**
	Հանձնառություն մեր բաժնետերերի նկատմամբ	**9**
	Հանձնառություն մեր հաճախորդների նկատմամբ	**10**
	Հանձնառություն մեր աշխատակիցների նկատմամբ	**10**
	Հանձնառություն կարգավորողի նկատմամբ	**10**
	Հանձնառություն արտքաին աուդիտորների և վարկանշային գործակալությունների նկատմամբ	**10**
	Հանձնառություն մեր ռազմավարական գործընկերների և ներդրողների նկատմամբ	**10**
	Սոցիալական պատասխանատվություն	**11**
	Կորպորատիվ կառավարում և թափանցիկություն	**11**
	Հավատարիմ լինելով մեր հանձնառություններին	**11**
04.	**ՄԵՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**	**12**
05.	**ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**	**15**

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ կամ Խումբ՝	ներառում է Հիմնական ընկերությունը և Դուստր ընկերությունը
ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԲԱՆԿ՝	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ՝ Խմբի կառավարման հիմնական մարմին
ԴՈՒՍՏՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԼԻԶԻՆԳ՝	«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ կամ ցանկացած այլ ընկերություն, որը Հիմնական Ընկերությունը ապագայում կարող է ձեռք բերել կամ հիմնադրել որպես դուստր ընկերություն՝ կիրառելի օրենսդրությամբ սահմանված կարգով:
ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝	Հիմնական ընկերության կոլեգիալ կառավարման մարմինը, որը ՀՀ օրենսդրությամբ և Հիմնական ընկերության կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակում պատասխանատու է ռազմավարական վերահսկողության, գործադիր կառավարման վերահսկման և բաժնետերերի և այլ շահակիցների շահերի պաշտպանության համար:
ԴՈՒՍՏՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝	Դուստր ընկերության կոլեգիալ կառավարման մարմինը, որը ՀՀ օրենսդրությամբ և Դուստր ընկերության կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակում պատասխանատու է ռազմավարական վերահսկողության, գործադիր կառավարման վերահսկման և բաժնետերերի և այլ շահակիցների շահերի պաշտպանության համար:
ԽՈՐՀՈՒՐԴ՝	ներառում է Հիմնական ընկերության և Դուստր ընկերության խորհուրդները:
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ՝	Հիմնական ընկերության գլխավոր գործադիր տնօրենը և դուստր ընկերության գլխավոր տնօրենը:
ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ (ԳԳՏ) ԿԱՄ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝	Հիմնական ընկերության միանձնյա գործադիր մարմինը, որը պատասխանատու է Հիմնական ընկերության գործադիր կառավարման և ամենօրյա գործունեության համար՝ գործող օրենսդրությամբ և Հիմնական ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով.
ԱՎԱԳ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝	Հիմնական ընկերության գլխավոր գործադիր տնօրենը, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալները, ռիսկերի կառավարման տնօրենը:

ՆԱԽԱԲԱՆ

Ռաֆայել Սարգսյան

Խորհրդի նախագահի ուղերձը

ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՄԲԻ կառավարման հիմքում ընկած են էթիկայի սկզբունքներն ու բարեվարքությունը: Որպես Խորհուրդ՝ մենք ստանձնում ենք պատասխանատվություն, որպեսզի մեր ռազմավարական ուղղությունն ու վերահսկողությունը մշտապես արտացոլեն արդարություն, թափանցիկություն և պատասխանատվություն: Էթիկայի կանոնագիրքը պարզապես ուղղորդող փաստաթուղթ չէ. այն մեր ընդհանուր հանձնառությունն էպահպանելու այն վստահությունը, որ մեր նկատմամբ ունեն մեր բաժնետերերը, հաճախորդները, աշխատակիցներն ու գործընկերները:

Խորհուրդը պետք է օրինակելի լինի իր գործողություններով: Կրելով այս արժեքները՝ մենք առաջնորդում ենք օրինակով և ապահովում, որ յուրաքանչյուր որոշում նպաստի Խմբի երկարաժամկետ կայունությանը, խթանի Հայաստանի Հանրապետության կայուն զարգացումը և պաշտպանի բոլոր շահակիցների շահերը:

Ռաֆայել Սարգսյան,
Խորհրդի նախագահ

Հակոբ Անդրեասյան

Գլխավոր գործադիր տնօրենի ուղերձը

Որպես Հիմնական ընկերության գլխավոր գործադիր տնօրեն՝ հպարտությամբ հաստատում եմ, որ Խումբն իր գործունեության բոլոր ոլորտներում առաջնորդվում է էթիկական վարքագծով: Մեր հաջողությունը պայմանավորված է ոչ միայն ֆինանսական արդյունքներով, այլև վստահությամբ, որը վաստակում ենք պատասխանատու, արդար և շահակիցների հետ փոխադարձ հարգալից վարքով:

Էթիկայի կանոնագիրքը ծառայում է որպես գործնական ուղեցույց Խմբի յուրաքանչյուր աշխատակցի և ղեկավարի համար: Այն հստակ սահմանում է, թե ինչպես պետք է գործենք. ազնվորեն՝ հաճախորդների հետ, հավատարմորեն՝ գործընկերների նկատմամբ, թափանցիկ՝ կարգավորողի հետ և պատասխանատու՝ հասարակության հանդեպ: Ընդունելով Կանոնագիրքը՝ մենք ապահովում ենք, որ մեր ամենօրյա գործողությունները համապատասխանեն Խմբի սահմանած արժեքներին:

Միասին մենք կշարունակենք կառուցել Խումբ, որը խթանում է կայուն աճը, աջակցում համայնքներին և մնում վստահելի գործընկեր ապագա սերունդների համար:

Հակոբ Անդրեասյան,
Հիմնական ընկերության
գլխավոր գործադիր տնօրեն



ՄԵՐ

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Խմբի ինքնությունը սահմանվում է հստակ առաքելությամբ և այն հիմնարար արժեհամակարգով, որը ձևավորում է մեր մշակույթն ու ուղղորդում մեր գործողությունները: Այս կենսարար տարրերը արտացոլում են, թե ով ենք մենք և ինչի ենք ձգտում որպես կազմակերպություն:

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«Ինքնատիպ և նորարար լուծումներով նպաստել հասարակության կայուն զարգացմանը»:

Խմբի առաքելությունն է հասնել ֆինանսական հաջողության այնպիսի եղանակով, որը նաև օգտակար կլինի մեր հաճախորդներին, մեր համայնքին և շրջակա միջավայրին: Այս առաքելությունն ամրագրված է մեր ռազմավարության մեջ և ուղղորդում է մեր որոշումները Խմբի բոլոր մակարդակներում: Մենք ձգտում ենք աճել և զարգանալ մեր շահակիցների հետ միասին՝ ապահովելով, որ մեր բիզնես գործունեությունը տնտեսական և սոցիալական դրական ազդեցություն ունենա:

Մեր արժեքները

Մեր առաքելությունն իրագործելիս մենք առաջնորդվում ենք հինգ հիմնարար արժեքներով, որոնք սահմանում են, թե ինչպես ենք մենք իրականացնում մեր գործունեությունը և ինչ ակնկալիքներ ունենք Խմբի յուրաքանչյուր աշխատակցից:

ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ.	մեր հաճախորդներին բարձրորակ ծառայություններ մատուցելը մեր առաքելության կարևոր մասն է: Յուրաքանչյուր աշխատակցից ակնկալվում է հարգալից վերաբերմունք ցուցաբերել հաճախորդների նկատմամբ, լսել նրանց կարիքները և մատուցել օգտակար ու բարձրորակ ծառայություններ:
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ.	մեր գործունեությունը միտված է դրական ազդեցություն թողնել հասարակության և շրջակա միջավայրի վրա:
ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ.	մենք խթանում ենք հավատարմությունը՝ լինելով վստահելի և հավատարիմ մեր հաճախորդներին, գործընկերներին և աշխատակիցներին:
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ.	մենք գործում ենք բաց և ազնիվ, հստակ ու պարզ հաղորդակցվում բոլոր շահակիցների հետ՝ ապահովելով, որ մեր տրամադրած տեղեկատվությունը լինի ճշգրիտ և ժամանակին:
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.	մենք խրախուսում ենք ստեղծագործական միտքը և ընդունում փոփոխությունները՝ դիտարկելով դրանք որպես մեր մատուցած ծառայություններն ու գործունեությունը շարունակաբար բարելավելու միջոց:

ՄԵՐ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խմբի էթիկայի կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք) արտահայտում է Խմբի հանձնառությունը՝ իր գործունեությունը բարեվարքորեն իրականացնելու՝ առաջնորդվելով մեր արժեքներով և սկզբունքներով: Մենք պարտավորվում ենք գործել էթիկապես գրագետ և պատասխանատու մեր բոլոր **շահակիցների** նկատմամբ, այդ թվում՝ մեր **բաժնետերերի, հաճախորդների, աշխատակիցների, կարգավորողի** և այլ **իրավասու մարմինների, ներդրողների** և **ռազմավարական գործընկերների, արտաքին աուդիտորների** և **վարկանշային գործակալությունների** և **ամբողջ հասարակության** նկատմամբ: Խումբը ձգտում է իր բոլոր գործողություններում լինել արդար, թափանցիկ և պատասխանատու ֆինանսական կազմակերպություն:

Խորհրդի և Ավագ ղեկավարության պարտականությունն է ձևավորել բարեվարքության մշակույթ՝ արտացոլելով սույն Կանոնագրքում սահմանված արժեքները: Նրանք պետք է ապահովեն, որ էթիկայի սահմանված չափանիշները պատշաճ և արդյունավետ ներկայացվեն և ամրապնդվեն Խմբի գործունեության բոլոր ոլորտներում:

Կանոնագրքի պահանջների պահպանումը պարտադիր է բոլոր այն անձանց համար, ովքեր ընդգրկված են դրա գործողության շրջանակում: Թեև մենք հետևում ենք բոլոր գործող և կիրառելի օրենքներին, կանոնակարգերին և ոլորտային ստանդարտներին, այնուամենայնիվ Կանոնագիրքը գերազանցում է պարզապես իրավական համապատասխանությունը, այն արտացոլում է մեր ձգտումը՝ պահպանելու էթիկական գերազանցություն:

Կանոնագիրքը վերաբերում է Խմբի բոլոր աշխատակիցներին և ղեկավարներին, ինչպես նաև բոլոր այն անձանց, ովքեր ներգրավված են Խմբի գործունեության մեջ՝ անկախ իրենց պաշտոնից, աշխատանքային կարգավիճակից կամ գտնվելու վայրից: Մենք նաև ակնկալում ենք, որ Խմբի անունից գործող երրորդ կողմերը, խորհրդատուները և ծառայություններ մատուցողներն առաջնորդվեն մեր էթիկայի չափանիշներով:

Խմբի բոլոր աշխատակիցները պետք է իրազեկ լինեն Կանոնագրքի կարգավորումներին: Դրանք ներառված են մեր ներքին քաղաքականությունների, դասընթացների և հսկողական գործընթացների մեջ: Աշխատանքային հարաբերություններում Կանոնագրքի սկզբունքներին համապատասխան գործելը անհրաժեշտ պայման է և վերահսկվում է մեր կորպորատիվ կառավարման և ներքին հսկողության համակարգերի միջոցով: Կանոնագրքի սկզբունքները մեր ամենօրյա գործունեության մեջ ներդնելով՝ մենք այն դարձնում ենք կենսունակ փաստաթուղթ, որը մշտապես ուղղորդում է մեր վարքագիծը:

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Խումբը հանձնառու է պաշտպանել իր բոլոր բաժնետերերի իրավունքներն ու շահերը՝ անկախ մասնակցության չափից: Մենք հավատարիմ ենք կորպորատիվ կառավարման և թափանցիկության բարձր չափանիշներին, որպեսզի յուրաքանչյուր բաժնետեր վստահի Խմբի կառավարմանը և արդյունքներին: Մենք բաժնետերերին հնարավորություն ենք տալիս կայացնել իրազեկ որոշումներ՝ ժամանակին և ճշգրտորեն բացահայտելով մեր ֆինանսական արդյունքները, ռազմավարությունն ու ռիսկերը:

Բաժնետերերի և մյուս շահակիցների շահերը հավասարակշռելով՝ մենք կառուցում ենք թափանցիկ և հաշվետու համակարգ, որը օգուտ է բերում ոչ միայն մեր սեփականատերերին, այլև բոլոր նրանց, ովքեր վստահել են Խմբին:

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մեր հաճախորդների վստահությունը մեր ամենաարժեքավոր ակտիվն է: Բոլոր հաճախորդները պետք է արժանանան քաղաքավարի, արժանապատիվ և անկողմնակալ վերաբերմունքի՝ բացառելով խտրականության որևէ դրսևորում:

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Խումբը հանձնառու է լինել արդար, ներառական և հավասար հնարավորություններ ապահովող գործատու: Մենք պահպանում ենք աշխատանքային գործունեության բարձր չափանիշներ՝ հետևելով աշխատանքային օրենսդրությանը և ապահովելով հավասար հնարավորություններ թե՛ աշխատանքի ընդունման, թե՛ մասնագիտական զարգացման ու առաջխաղացման գործընթացներում: Մենք չենք հանդուրժում աշխատավայրում խտրականության, ոտնձգության կամ անհարգալից վարքագծի որևէ դրսևորում:

Միևնույն ժամանակ, մենք ներդրումներ ենք կատարում մեր մարդկային կապիտալում: Խումբը ապահովում է վերապատրաստման և մասնագիտական զարգացման հնարավորություններ՝ օգնելու աշխատակիցներին շարունակաբար կատարելագործել իրենց գիտելիքներն ու հմտությունները: Մենք խրախուսում ենք թիմային աշխատանքը, բաց հաղորդակցությունը և գործընկերների միջև փոխադարձ հարգանքը:

Խումբը խրախուսում է իր աշխատակիցների ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումը՝ տրամադրելով մի շարք առավելություններ, ներառյալ՝ կյանքի և առողջության ապահովագրություն և սոցիալական փաթեթ:

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Խումբը հանձնառու է համապատասխանել կարգավորող չափանիշներին և պահպանել թափանցիկ և համագործակցային հարաբերություններ ՀՀ Կենտրոնական բանկի հետ: Մենք սեփական նախաձեռնությամբ համապատասխանեցնում ենք մեր ներքին քաղաքականությունները և ռիսկերի կառավարման պրակտիկան կարգավորող պահանջներին և միջազգային լավագույն փորձին՝ հաճախ ձգտելով գերազանցել նվազագույն պահանջները:

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՆՇԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մենք բաց երկխոսություն ենք վարում արտաքին աուդիտորների և վարկանիշային գործակալությունների հետ՝ գնահատելով նրանց անկախ տեսակետը՝ որպես մեր գործունեության բարելավման միջոց: Խումբը հարգում է այդ կազմակերպությունների կողմից տրամադրված եզրակացություններն ու վարկանիշները և նրանց առաջարկությունները օգտագործում է որպես մեր ֆինանսական գործունեությունը բարելավելու հնարավորություն:

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Խումբը կառուցում և զարգացնում է ռազմավարական գործընկերություններ, որոնք ուժեղացնում են մեր հաճախորդներին սպասարկելու և տնտեսական զարգացմանը նպաստելու կարողությունը: Մենք հպարտ ենք համագործակցել միջազգային ֆինանսական կազմակերպությունների, զարգացման գործակալությունների և գլոբալ կազմակերպությունների հետ, որը հիմնված է փոխադարձ վստահության և օգուտի վրա: Մենք հավասարապես

գնահատում ենք մեր ներդրողների վստահությունը, ովքեր աջակցում են Խմբի աճին և նպատակներին: Բոլոր նման փոխհարաբերություններում՝ անկախ նրանից, թե դրանք զարգացման բանկերի հետ համաֆինանսավորման համաձայնագրեր են, ռազմավարական նախաձեռնություն բիզնես գործընկերների հետ, թե ներդրումներ՝ մեր բաժնետերերի և պարտատերերի կողմից, մենք գործում ենք ազնիվ, պրոֆեսիոնալ և հարգալից:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Խումբը սոցիալական պատասխանատվությունը դիտարկում է որպես իր առաքելության և ինքնության հիմնարար տարր: Ֆինանսական կազմակերպության դերից զատ, մենք հանձնառու ենք հասարակության համար ստեղծել երկարաժամկետ արժեք և խթանել Հայաստանի Հանրապետության կայուն զարգացումը: Այս հանձնառությունը ներառում է համապարփակ համայնքային զարգացում, շրջակա միջավայրի պահպանություն, մշակութային ժառանգության խթանում, ինչպես նաև համապատասխանություն ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Խումբը հանձնառու է ապահովել կորպորատիվ կառավարման բարձրագույն չափանիշները: Մենք պահպանում ենք կառավարման ամուր կառուցվածքներ և քաղաքականություններ՝ Հայաստանի Կորպորատիվ կառավարման կանոնագրքին և միջազգային լավագույն փորձին համապատասխան: Մենք հավատարիմ ենք թափանցիկությանը, հաշվետվողականությանը և էթիկական որոշումների կայացմանը՝ Խմբի կառավարման բոլոր մակարդակներում: Խորհուրդը վերահսկում է Խմբի էթիկայի չափանիշների և կայուն զարգացման նպատակների իրականացումը՝ սահմանելով ռազմավարական նպատակներ, որոնք ներառում են նաև բնապահպանական, սոցիալական և կառավարման («ԲՍԿ») հանձնառություններ: Կառավարման այս շրջանակի միջոցով Խորհուրդն ու Գործադիր մարմինն ապահովում են, որ արդարության, ազնվության և պատասխանատվության սկզբունքները լիարժեք ներառված լինեն մեր ռազմավարության և գործառույթների մեջ:

ՀԱՎԱՏԱՐԻՄ ԼԻՆԵԼՈՎ ՄԵՐ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Մեր հանձնառությունները՝ ուղղված բաժնետերերին, հաճախորդներին, աշխատակիցներին, համայնքներին և գործընկերներին, պարզապես գրավոր հայտարարություններ չեն. դրանք այն խոստումներն են, որոնք մենք վերահաստատում ենք մեր ամենօրյա գործունեությամբ: Ակնկալվում է, որ յուրաքանչյուր աշխատակից գնահատի իր աշխատանքի ազդեցությունը մեր շահակիցների և հասարակության լայն շրջանակի վրա և յուրաքանչյուր որոշման մեջ պահպանի արդարության, թափանցիկության և պատասխանատվության սկզբունքները: Հավատարիմ մնալով մեր արժեքներին և հանձնառություններին՝ մենք ամրապնդում ենք Խմբի համբավը՝ որպես վստահելի և բարեվարք կազմակերպություն, և խթանում ենք Հայաստանի Հանրապետության տնտեսության և համայնքների կայուն զարգացումը:

ՄԵՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Խմբի վարքագծի սկզբունքները սահմանում են մեր վարքագծի շրջանակը և ամենօրյա աշխատանքի չափանիշները: Այս սկզբունքները հստակ ակնկալիքներ են սահմանում յուրաքանչյուր աշխատակցի և ղեկավարի համար՝ մեր յուրաքանչյուր գործողություն համապատասխանեցնելով բարեվարքության, արդարության և հարգանքի չափանիշներին: Դրանք մեր էթիկական մշակույթի հիմքն են հադիսանում և Խմբի համար ապահովում են մասնագիտական և անձնական պատասխանատվության ընդհանուր չափանիշ:

Վարքագծի սկզբունքներ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻՆ.

մենք հետևում ենք բոլոր կիրառելի իրավական կարգավորումներին՝ օրենքներին, կանոնակարգերին և Խմբի ներքին իրավական ակտերին:

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ.

մենք խուսափում ենք այն իրավիճակներից, երբ անձնական շահերը հակասում են կամ կարող են հակասել Խմբի պարտավորություններին: Յուրաքանչյուր որոշում պետք է կայացվի՝ հաշվի առնելով Խմբի և նրա շահակիցների լավագույն շահերը:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ ԵՎ ՆՎԵՐՆԵՐ.

մենք դատապարտում ենք կաշառքը և կոռուպցիան, ինչպես նաև խստորեն սահմանափակում ենք այն նվերներն ու հյուրընկալության/հյուրասիրության դրսևորումները, որոնք կարող են ոչ պատշաճ կերպով ազդել որոշումների կայացման վրա:

ՎԱՐՔԱԳԻԾԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.

մենք խրախուսում ենք հարգալից, ներառական և անվտանգ աշխատանքային միջավայրը՝ զերծ ոտնձգությունից, խտրականությունից կամ սպառնալիքից:

ԽՄԲԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ.

մենք պաշտպանում ենք Խմբի ֆիզիկական, ֆինանսական և տեղեկատվական ակտիվները և դրանք պատասխանատու կերպով օգտագործում ենք միայն օրինական բիզնես նպատակների համար: Մեզ վստահված գաղտնի տեղեկատվությունը՝ Խմբի, նրա հաճախորդների կամ այլ շահակիցների վերաբերյալ, պետք է պաշտպանված լինի չարտոնված օգտագործումից կամ բացահայտումից՝ սահմանելով վստահության բարձր նշաձող և շահակիցների շահերի պաշտպանություն:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԴԱՐ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ.

մենք գործում ենք ազնիվ և արդարացի բոլոր հաճախորդների նկատմամբ՝ պաշտպանելով նրանց իրավունքներն ու տվյալները:

Վարքագծի սկզբունքներ

ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԵՎ ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

մենք պահպանում ենք թափանցիկ և համագործակցային հարաբերություններ կարգավորողի և այլ իրավասու մարմինների հետ:

ՀԱՐԳԱՆՔ ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ.

մենք մեր որոշումներում հաշվի ենք առնում շրջակա միջավայրի պաշտպանությունը՝ նվազագույնի հասցնելով վնասը և նպաստելով կայուն զարգացմանը:

ՀԱՂՈՐԴՈՒՄ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԱԶԴԱՐԱՐՈՒՄ).

մենք աշխատակիցներին խրախուսում ենք բարձրաձայնելու իրենց մտահոգությունները էթիկական մարտահրավերների և խնդիրների վերաբերյալ: Վստահեցնում ենք, որ հաղորդումները կքննվեն առանց հաղորդում ներկայացնողի նկատմամբ հետապնդումների:

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Խորհուրդը գիտակցում է, որ մեր էթիկական գործելակերպը միշտ հնարավոր է կատարելագործել: Մենք խրախուսում ենք բոլոր աշխատակիցներին արտահայտել իրենց կարծիքը Կանոնագրքի սկզբունքների և սահմանած չափանիշների վերաբերյալ և առաջարկել բարեվարքության մշակույթը բարելավելու ուղիներ: Կանոնագիրքը տարին մեկ անգամ կվերանայվի և կթարմացվի՝ ըստ անհրաժեշտության արձագանքելով նոր մարտահրավերներին, իրավական փոփոխություններին և ոլորտում ձևավորված լավագույն փորձին: Մեր հանձնառությունը էթիկայի նկատմամբ շարունակական գործընթաց է, և մենք գնահատում ենք մեր աշխատակիցների ներդրումը մեր չափանիշներն արդիական և արդյունավետ պահելու գործում:

ՀԱԾՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ	ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ
GROUP CODE 01#6	1	09.10.2025թ.	28.10.2025թ.

ՀԱՍՏԱՏՈՂ՝

ՊԱՇՏՈՆ	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի նախագահ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ Խորհրդի նախագահ	Ռաֆայել Սարգսյան

acba

ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ՀՀ, Երևան 0002, Արամի փ. 82-84
www.acba.am | 010 31 88 88

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից